ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 77 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր վաթսունմեկ, աշխատանքի տեղավորման՝ տասնհինգ, բնակարանով ապահովելու խնդրանքով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության վաթսունմեկ դիմումներին տրվել է դրական լուծում: Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին տասնհինգ դիմումները:

Մարզպետի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվում է բնակարանով ապահովելու վերաբերյալ դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ